փառաց և տուօղ ողորմուե՞ց միոյն ճ՟.ապատիկ[1] և հաղարպատիկ տացէ նմա զտէր զաքարիայ կ՞թկոսին և բարի[2] ծնօղացն ն՞րին զերկնից արքայուի՞ն և զանվախճան[3] թ՞գւրուի՞ն հանդերձ[4] ա՞մ ազգատոհմօքն իւր. և լի բերանօք ա՞ծ ողորմի ասացէք ն՞ց

**47.** Նոցա. ամէն։

Յետ[5] Տէր զաքարիային նստաւ տ՞ր դաւիթն. յետ ն՞ր[6] նստաւ Տէր ներսէս, որ մականուն[7] փոլատ ասի։ Յետ այնոր Տ՞ր Զաքարիայն, որ նահատակեցաւ յանօրինաց ի յոստան քաղաքի և եղև մեծ սուք հայոց ազգին։ Յետ ն՞ր[8] Տէր ներսէս նստաւ յաթոռ հօրեղբօրորդի[9] Տ՞ր զաքարիային, որ շատախու յերկիրն անկաւ ի գետն։ Յետ այնոր նստաւ յաթոռս Հեզահոգի Տէր դաւիթ կ՞թկոս ա՞մ հայոց, աղքատասէր և ողորմած և ա՞մ առաքինու՞ք լցեալ. և ետ[10] գրել այսմաւուրք մի քաջ քարտուղին՝ թօմայ վ՞րդպտին մականուն[11] կոռճով կոչեցե՞լ։ Այլ և զարհի եպ՞սն և քաջ գրագիրն զտ՞ր զանիէլն՝ որ[12] զբազումս լուսաւորեաց պտղւոյ մատամբ իւրով. մանաւանդ զաթոռս մեր, զճառ զարդիս գիրքն և

---

[1] Ջ. տի տղմ. [2] Ջ. բար

[3] Ջ. զանվանան

[4] Ջ. դեր տղմ.

[5] Ջ. շրն. այլ և՝ յետոյ, ոյ ջնջ. նշ.

[6] Ջ. ն՞ր-ից յետոյ մի աւելորդ տ՞ր

[7] Ջ. մակ անուն.

[8] Ջ. ն՞ր տղմ.

[9] Ջ. 2-րդ ր տղմ.

[10] Ջ. ես տղմ.

[11] Ջ. մակ անուն

[12] Ջ. ւոր ւ-ի ներկայութիւնն այստեղ հայերէնի ձայնաբանութեան համար խիստ կարևոր է, իբրև ապացոյց, որ այդ ժամանակ և վասպուրականի շրջանում ռ-ն բառասկզբին կարդացւում էր վօ և ոչ օ.